600.0069.12.12.01.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 դեկտեմբերի 2001 թվականի N 69
ք. Երևան

2001-2002թթ. ձմռան ժամանակաշրջանում «Սևանի թիվ 1 ջերմամատակարարում» ՍՊԸ-ի կողմից իրականացվող կենտրոնացված ջեռուցման սակագների մասին

Ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի ա) կետով և 21-րդ, 22-րդ հոդվածներով, ելնելով 2001-2002թթ. ձմռան ժամանակաշրջանում հանրապետությունում ջեռուցման ապահովման անհրաժեշտությունից, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. 2001-2002թթ. ձմռան ժամանակաշրջանում Գեղարքունիքի մարզի Սևանի համայնքի «Սևանի թիվ 1 ջերմամատակարարում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից իրականացվող կենտրոնացված ջեռուցման համար սահմանել՝

1.1 Ջեռուցման ժամանակաշրջանի տևողությունը՝ 120 օր.

1.2 Ջեռուցման սակագները (ներառյալ ավելացված արժեքի հարկը)՝

ա) բնակչության համար՝ 1681 դր/քմ

8273 դր/Գկալ

բ) այլ սպառողների համար՝ 8273 դր/Գկալ

2. Ընդունել ի գիտություն, որ բնակչությանն առաքվող ջերմային էներգիայի՝ մեկ քմ բնակելի մակերեսի համար սահմանված սակագինը կիրառելի է ջերմային

էներգիայի հաշվառքի սարքերի բացակայության դեպքում: Հաշվառքի սարքերի առկայության դեպքում գործում է մեկ Գկալ-ի համար սահմանված սակագինը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2002 թվականի հունվարի 11-ից:

ՀՀ էներգետիկայի կարգավորող
հանձնաժողովի նախագահ՝ ***Վ. Մովսեսյան***